ՍՏԱԼԻՆԻԶՄ ԵՒ ՀԿ(բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ 1937Ի ՉԱՐԱԳՈՒՇԱԿ ՍԵՊՏԵՄԲԵՐԵԱՆ *ՊԼԵՆՈՒՄԸ*[1]

ՍԵՐՀԱԿ ԱՄԻՐԵԱՆ (vahamir@yahoo.com)

ՄՈՒՏՔ

Հայ ժողովրդի, մասնաւորապէս վերջին հարիւրամեայ պատմութեան, եղծուած ու կեղծուած կամ բացառապէս սպիտակ էջերի լուսաբանումը, շարունակում է մնալ հայ պատմագիտութեան առաջնահերթ խնդիր: Իւրաքանչիւր քայլ այս ուղղութեամբ՝ համարժէք է իրադարձութեան: Առաւել եւս եթէ հարցը վերաբերում է գիտական լայն շրջանակներին ցարդ անյայտ, կամ քիչ յայտնի պատմական էական հարցի լուսաբանմանը: Այդպիսի էջերից է ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1937ի սեպտեմբերեան *պլենումը*, որի խորքային պատմութեան լուսաբանմանն է նուիրուած սոյն յօդուածը:

Նման լուսաբանումը թոյլ կը տայ ընթերցողին առարկայօրէն ընկալել՝ «ըմբռոշխնել» ստալինեան մտածուած-գործադրուած գաղափարաքաղաքական մղձաւանջը, որն աստիճանաբար ներմուծուեց հասարակութեան մէջ, դուրս մղելով առողջ մտածողութիւնն ու դատողութիւնը, թելադրելով նրա վարքագիծն ու գործելակերպը: Միւս-ներին ստիպելով գոյատեւելու համար արտաքուստ համակերպուել իրադրութեանը, խոր թաքցնելով սեփական մտածումներն ու կարծիքները: Իսկ խիզախ ընդդիմադիրներին՝ սեփական գլուխը դնել կառափնարանին:

Կուսակցական այս *պլենումը* առանձնայատուկ է Հայաստանի եւ հայ ժողովրդի խորհրդային շրջանի պատմութեան մէջ ամէնից առաջ իր ընդունած չարագուշակ որոշումներով, որոշումներ, որոնք այնքան հեռու տանող ծանր ու ողբերգական հետեւանքներ ունեցան մեր ժողովրդի համար: Այս *պլենումով*, այսպէս կոչուած «Հայաստանեան գործի» տեսական եւ գործնական մեկնարկը տրուեց, որի համար հիմք հանդիսացաւ Ստալինի նամակը: Ստալին, որը շուտ սովորեց բռնութեանը՝ որպէս անսահմանափակ իշխանութեան հասնելու պարտադիր պայման (միաժամանակ բռնութիւնը փաստօրէն դարձնելով վճռական միջոցներից մէկը՝ իրագործելու ընկերատնտեսական պլաններն ու ծրագրերը): Ստալին, որը հիմնաւորապէս իւրացրել էր «բաժանիր ու տիրիր» մաքիաւելական իշխանութեան հասնելու բանաձեւը ու, պէտք է խոստովանել, հմտօրէն իրակա-

[1] ՀԿ(բ)Կ (Հայաստանի Կոմունիստական (բոլշեւիկեան) Կուսակցութիւն) կենտրոնական կոմիտէի *պլենում* ՀամԿ(բ)Կ (Համամիութենական Կոմունիստական (բոլշեւիկեան) Կուսակցութիւն, աւելի ուշ՝ ԽՄԿԿ - Խորհրդային Միութեան Կոմունիստական Կուսակցութիւն) կենտրոնական կոմիտէի *պլենումի* օրինակով, կենտկոմի լրիւ կազմի ժողով (խորհրդաժողով): Այն անցկացւում էր ոչ-պակաս 6 ամիսը մէկ՝ կուսակցութեան քաղաքականութեան ընթացիկ կարեւորագոյն հարցերի որոշման համար:

նացրեց Լենինից յետոյ լենինեան խմբակի ներկայացուցիչների, յեղափոխութեան մրրիկներով անցած իր գործընկերների հանդէպ՝ Տրոցկուց մինչեւ Զինովեւ, Կամենեւ, Բուխարին, Ռիկով, Տոմսկի... հեռացնելով նրանց մէկ առ մէկ մենատիրութեան հասնելու իր ճանապարհից՝ ֆիզիկապէս ոչնչացնելով: Նադեժդա Կրուպսկայան (Լենինի կինը) 1920ականների վերջերին գրած մի նամակում նշում էր. «Եթէ Վոլոդիան (Լենինը - Ս.Ա.) կենդանի մնար, նա հիմա նստած կը լինէր բանտում»[2]:

Ստալինը, սակայն, միաժամանակ ասում էր. «*...աշխարհում եղած բոլոր արժէքաւոր կապիտալներից ամենաարժէքաւոր եւ ամենավճռորոշ կապիտալը հանդիսանում են մարդիկ, կադրերը... կադրերը վճռում են ամէն ինչ*»[3]: Ստալին, որին թիկնազօրը հանդիսացող խորհրդային ղեկավարութիւնը, խորհրդային լրատուամիջոցները կոմունիզմի կառուցման *Մեծ ճարտարապետ*, *Առաջնորդ* էին հռչակել նրան: Դժբախտաբար նրա կամքով խորհրդային ժողովրդի միլիոնաւոր զաւակներ՝ ժողովրդի, ընկերութեան թշնամի պիտակաւորմամբ բռնադատուել էին՝ գնդակակահարուել (1921ից մինչեւ 1953 բոլոր մարմինների կողմից պատժի առաւելագոյն չափի դատապարտուեց 642,000 մարդ), կամ աքսորուել: Ստեղծուել էր պատմութեան աննախադէպ համակենտրոնացման ճամբարների՝ երկրի ողջ արեւելքը ընդգրկող լայն սարդոստայնային ցանց, որը գրականութիւնում ստացաւ «Արշիպելագ գուլագ» անուանումը[4]: «*Գիւղացիներն էին հասարակական այն շերտը, որը բացարձակ թուերով ենթարկուեց առաւել շատ հալածանքների ստալինեան բռնադատումների տարիներին: Որոշ հաշումներով՝ միայն 1933-1935 թթ. ճամբարներում գտնւում էին 3,5 մլն. գիւղացի - 70 տոկոսը բոլոր ձերբակալուածների այդ ժամանակում*»[5]:

Ստալինի պաշտամունքը, ստալինիզմը տարածուեց աշխարհի շատ երկրներում, մասնաւորապէս կոմունիզմի ուղին որդեգրած ընկերվարական ճամբարի՝ Արեւելեան Եւրոպայից մինչեւ Լատին Ամերիկայի (մասնաւորապէս Կուբա), հարաւ-արեւելեան Ասիայի երկրները՝ Վիետնամ, Չինաստան: Վերջինումս այսօր էլ ծաղկում է նրա պաշտամունքը:

*Պլենում*ի աշխատանքները սկսուեցին 1937ի Սեպտեմբերի 15ին եւ եռօրեայ խորհրդաւոր ընդմիջումից յետոյ շարունակուեցին՝ 22-23-ին[6]:

Յատկանշանական է, որ Հայկոմկուսի եւ Հայաստանի իշխանութիւնների պատգամախօսը հանդիսացող *Խորհրդային Հայաստան* թերթը *պլենում*ի մասին՝ «Ինֆորմացիոն հաղորդագրութիւն» խորագրի տակ ա-

---

[2] *Комсомольская правда*, 5 Մայիս 1990:

[3] ՀԱԱ, նախկին կուսարխիւ, ֆ. 1, ց.17, գ. 8, թթ. 25-26:

[4] Aleksandr Solzhenitsyn, *The Gulag Archipelago: An Experiment in Literary Investigation* եռահատոր երկ: «Գուլագ»-ռուսերէն յապաւումը՝ «Ճամբարների գլխաւոր վարչութիւն»:

[5] *Известия*, 21 Դեկտեմբեր 1988:

[6] ՀԱԱ, նախկին կուսարխիւ, ֆ. 1, ց. 17, գ. 25, թթ. 7-10:

ռաջին եւ միակ հաղորդումը տպագրեց Սեպտեմբերի 26ի համարի առաջին էջում, երբ երեք օր էր առաջ այն աւարտուել էր. «*Սեպտեմբերի 23ին իր աշխատանքն աւարտեց Հայաստանի Կ(բ)Կ կենտկոմի* պլենումը*: Պլենու-մը որոշեց ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղարներից հանել՝ Հ. Ամատունուն եւ Ստ. Ակոպովին:* Պլենումը *ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար ընտ-րեց ընկ. Գ.Ա. Յարութիւնեանին*»: Ապա տրւում էր նորընտիր կուսակցա-կան բարձրագոյն մարմինների կազմը: Վերջին տողով յայտնւում էր պլե-նումի մասնակիցների կողմից Մեծ Առաջնորդին ուղարկուած նամակի մասին: Ուրիշ ոչինչ:

Ոչ մի խօսք, որ *պլենումի* աշխատանքներին մասնակցելու համար Երեւան էին ժամանել ՀամԿ(բ)Կ կենտկոմի քաղբիւրոյի անդամ՝ Ա.Ի. Միկոյեանը, ՀամԿ(բ)Կ կենտկոմի ղեկավար կուսակցական մարմինների բաժնի վարիչ Գ. Մալենկովը, նոյն բաժնի երեք աշխատակիցներ, ԽՍՀՄ (Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութիւն) ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի ներկայացուցիչը, ՀԿ(բ)Կ կենտկոմի անդամ Լաւրենտի Բերիան: Ոչ մի խօսք Ստալինի նամակի, առաւել եւս՝ այդ նամակի բովանդակութեան մասին:

Պլենումի՝ արխիւում պահպանուած արձանագրութիւնը խիստ հակիրճ տեղեկագրում է կայացած նիստերի (առաւօտեան եւ երեկոյեան), նիստերում ելոյթ ունեցողների եւ առաջարկութիւնների մասին: *Պլենումում* քննարկուող գլխաւոր-կենտրոնական հարցը Ստալինի նամակն էր, որը *Պլենումի* առաջին նիստում ներկայացրեց Մալենկովը:

ՍՏԱԼԻՆԻ ՆԱՄԱԿԸ

Խիստ գաղտնի, անմատչելի համարուող այդ նամակի գոյութեան մասին հանրապետութիւնում տեղեակ էին հաշուած մարդիկ: Նրա բնօրինակը պահւում էր կուսակցական արխիւի տնօրէնի անկիզելի պահարանում եւ լոյս աշխարհ եկաւ միայն խորհրդային կարգերի փլուզումից յետոյ: Հայաստան պարբերաբար ուղարկուող Առաջնորդի հեռագրական հաղորդագրութիւնները բազմաթիւ են: Սակայն Ստալինի անձնական ստորագրութիւնը կրող այս նամակը միակն է, որ բերուել է Հայաստան անձամբ նրա բարձրաստիճան ներկայացուցիչների կողմից: Առաջնորդը սովորաբար իր ստորագրութիւնը դնում էր կարմիր կամ կապոյտ մատիտներով, որոնց ընտրութիւնը, հաւատացած եմ, պատահական չէր կարող լինել, այլ մերձաւոր շրջապատին յուշող հասկանալի որոշակի բովանդակութիւն էր պարունակում: Այս նամակի տակ Ստալինը ստորագրել էր կարմիր մատիտով: Ստորեւ՝ նամակը ամբողջութեամբ[7].-

[7] ՀԱԱ, նախկին կուսարխիւ, ֆ. 1, ց. 25, գ. 78ա, թթ. 1-5:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ ԲԻՒՐՈՅԻՆ

ԽՍՀՄ Կառավարութիւնը եւ ՀամԿ(բ)Կ կենտկոմը համարում են, որ Հայաստանում գործերը՝ ինչպէս տնտեսական, այնպէս էլ կուսակցական եւ մշակութային գնում են չափազանց վատ: Գիւղատնտեսութիւնը տապալուած է, կառուցուող արդիւնաբերական ձեռնարկութիւնները լճացուած են: Դրամական միջոցները, որոնք կառավարութեան կողմից յատկացուել են ըստ Հայաստանի Կ(բ)Կ կենտկոմի պահանջի, ու՞ր են գնում՝ դժուար է ասել: Մշակութային շինարարութիւնը կաղում է, իսկ կուսակցական աշխատանքը դարձեալ շեղուել է կուսակցական գծից, տրոցկիստները եւ միւս հակակուսակցական տարրերը չեն հանդիպում ցանկալի հակահարուածի Հայաստանի կուսակցական ղեկավարութեան կողմից: Վերջին իրադարձութիւնները, Տէրգաբրիէլեանի[8] «ինքնասպանութեան» վերաբերեալ՝ արտացոլում են որպէս կիզակէտում ողջ այն առաւելագոյն նեխուածութիւնը եւ քայքայուածութիւնը, որոնք կազմաւորում են Հայաստանի կուսակցական եւ սովետական կազմակերպութիւնների իրավիճակի արդիւնքը: Դժուար է պատկերացնել, որ Տէրգաբրիէլեանը դուրս է նետուել լուսամուտից, դա բացարձակապէս անհամատեղելի է նրա երկչոտ եւ հաշուենկատ բնաւորութեան հետ: Ամէնից շուտ՝ նրան դուրս են նետել եւ փակել են նրա կոկորդը, որպէսզի նա չկարողանայ բացայայտել խորհրդային իշխանութեան թշնամիներին: Խիստ տարօրինակ է, որ Հայաստանի ղեկավարութիւնը անհրաժեշտ չի համարել այդ մասին հաղորդել ԽՍՀՄ ժողկոմխորհին կամ ՀամԿ(բ)Կ կենտկոմին: Ցանկանում էին, երեւի թէ, թաքցնել այդ աղաղակող փաստը եւ միամտօրէն ենթադրում, որ կը յաջողուի թաքցնել:

ՀամԿ(բ)Կ կենտկոմը եւ ԽՍՀՄ ժողկոմխորհը չեն կարող թոյլ տալ, որ հայ ժողովրդի թշնամիները ազատօրէն շրջեն Հայաստանում, վնասեն ժողովրդական տնտեսութեանը եւ կազմալուծեն գիւղացիութեանը, բանուոր դասակարգին:

ՀամԿ(բ)Կ կենտկոմը եւ ԽՍՀՄ ժողկոմխորհը չեն կարող թոյլ տալ, որ հայ ժողովրդի թշնամիների հովանաւորները թաքցնեն ժողովրդից ղեկավարութեան խոցերը եւ այդ խոցերը քօղարկելու համար ժողովրդի թշնամու սպանութիւնը, որը ցանկանում էր ազատութեան մէջ գտնուող ժողովրդի թշնամիներին բացայայտել, «ինքնասպանութիւն» համարել:

Որպէս առաջին միջոց ՀամԿ(բ)Կ կենտկոմը եւ ԽՍՀՄ ժողկոմխորհը որոշել են ձերբակալել Մուղդուսուն[9] եւ Գուլոյեանին[10], որոնք չեն կարող ուղղակի պատասխանատուութիւն չկրել բոլոր բացայայտուած այլանդակութիւնների համար:

---

[8] Սահակ Միրզոյի Տէրգաբրիէլեան.- ԽՄԿԿ անդամ 1902ից, Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելու համար պայքարի ղեկավարներից, 1928-35՝ Խորհրդային Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ, ԽՍՀՄ կենտրոնական գործադիր կոմիտէի (խորհրդարան) անդամ, անհիմն բռնադատուած, արդարացուած յետմահու:

[9] Մուղդուսի.- Հայաստանի ներքին գործերի կոմիսար:

[10] Գուլոյեան.- Հայաստանի ժողկոմխորհի նախագահ:

Պատասխանատուութիւնը ինքնաբերաբար ընկնում է նաեւ ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարի վրայ, որի կապակցութեամբ եւ գործուղում է ՀամԿ(բ)Կ կենտկոմի ներկայացուցիչ Մալենկովը՝ տեղում քննութիւն անցկացնելու համար:

8 / IX, 37 Ի. Ստալին

Ստալինիզմի ուսումնասիրողները, մասնաւորապէս Դմիտրի Վոլկոգոնովը, նշում է. «*Ամէնի հետ մէկտեղ Ստալինը մեծ դերասան էր: Նա բացառապէս վարպետօրէն խաղում էր բազմաթիւ դերեր. համեստ ղեկավարի, կուսակցական գաղափարների մաքրութեան համար մարտիկի... «առաջնորդի», «ժողովուրդների հօր», մեծ զօրավարի, տեսաբանի, արուեստի գնահատողի, գուշակի... Ստալինին հասկանալու համար անհրաժեշտ է մշտապէս նկատի ունենալ. նա եղել է մեծ վարպետ ներկայացնելու սխալ-ները, բացթողումները, յանցագործութիւնները, իր բնաւորութեան չարա-գուշակ գծերը որպէս ձեռքբերումներ, յաջողութիւններ, հեռատեսութիւն, իմաստութիւն, մշտական հոգատարութիւն մարդկանց մասին*»[11]:

Հայաստան ուղարկուած իր նամակում, ինչպէս տեսնում ենք, նա նախկինի պէս, երբ 1921ին հայկական Արցախն ու Նախիջեւանը յանձնուեց Ադրբեջանին ու ինքը գլխաւոր դերակատարն էր այդ գործում, խիստ «մտահոգ» է հայ ժողովրդի ճակատագրով: Նա գրում է, որ «*ՀամԿ(բ)Կ կենտկոմը եւ ԽՍՀՄ ժողկոմխորհը չեն կարող թոյլ տալ (այսինքն՝ ինքը), որ հայ ժողովրդի թշնամիները ազատօրէն շրջեն Հայաստանում, վնասեն...կազմալուծեն...թշնամիների հովանաւորները թաքցնեն ժողովրդից ղեկավարութեան խոցերը...*»:

Նամակի ընթերցումից յետոյ սկսուեցին նամակի քննարկումները: Պլենումի արձանագրութիւնում նշուած են միայն քննարկման մասնակիցների անունները՝ առանց ելոյթների շարադրանքի: Չկայ նաեւ Մալենկովի ելոյթի բնագիրը: Ինքնըստինքեան հասկանալի է, որ բոլոր ելոյթաւորները միահամուռ պէտք է անարգանքի սիւնին գամէին Հայաստանում հակայեղափոխական, տրոցկիստական «թափթփուկներին» եւ փառաբանութեան, գովքի ներբողներ հիւսէին առ «Ամենահմաստուն, հանճարեղ Մեծ Առաջնորդին»:

Ստալինի նամակի հենց առաջին տողերում նշուած. «*Հայաստանում գործերը՝ ինչպէս տնտեսական, այնպէս էլ կուսակցական եւ մշակութային գնում են չափազանց վատ*», ոչ մի կերպ չի համատեղւում 1935ի Դեկտեմբերին նոյն Ստալինից Հայաստանի ղեկավարների, այդ թւում Խանջեանի՝ ԽՍՀՄ ամենաբարձր պարգեւով՝ Լենինի շքանշանով պարգեւատրելու հետ, պարզ է ոչ թէ վատ աշխատանքի եւ ձախողումների, այլ ար-

[11] Դմիտրիյ Վոլկոգոնով, *Триумф и трагедия* (յաղթանակ եւ ողբերգութիւն), Մոսկուա, 1989, էջ 19, 27:

դիւնաբերութեան, գիւղատնտեսութեան, մշակութային, այլ ասպարէզներում բարձր ցուցանիշների ձեռքբերման համար, եւ այդ կապակցութեամբ ողջ հանրապետութիւնում տեղի ունեցած հպարտութեան շքերթի:

Եւ ապա, երբ դրանից ոչ շատ առաջ՝ 1936ի Յունուարի սկզբներին, Կրեմլում Ստալինի կողմից հայ պատգամաւորների ընդունելութեան ժամանակ պատգամաւորները նշեցին Հայաստանի ձեռք բերած նուաճումները, եւ այդ գործում Բերիայի ու Խանջեանի դերը, Ստալինը չառարկեց, հակառակը, հայերէն բացականչեց. «Կեցցէ՛ Խանջեանը»[12]:

ՍԱՀԱԿ ՏԷՐԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ ԳՈՐԾԸ

Գանք գլխաւորին. ամենաէականը նամակում Սահակ Տէրգաբրիէլեանի ողբերգական մահուան յիշատակումն է՝ դիւային մի հանգոյց, Հայաստանի համար հեռուն գնացող նոյնքան դիւային հետեւութիւններով[13]:

Նամակում Ստալինն արտայայտում է հետեւեալ հիմնական միտքը. «*Դժուար է պատկերացնել, որ Տէրգաբրիէլեանը դուրս է նետուել լուսամուտից, դա բացարձակապէս անհամատեղելի է նրա երկչոտ եւ հաշուենկատ բնաւորութեան հետ: Ամէնից շուտ՝ նրան դուրս են նետել եւ փակել են նրա կոկորդը, որպէսզի նա չկարողանայ բացայայտել խորհրդային իշխանութեան թշնամիներին*»: Իսկապէս, դժուար էր պատկերացնել, որ Տէրգաբրիէլեանը կարող էր դուրս նետուել լուսամուտից, ո՛չ Առաջնորդին՝ Տէրգաբրիելեանին տուած գնահատականի պատճառով, այլ ամէնից առաջ նրա առողջական վիճակի (ներքին գործերի կոմիսարիատի զնդանում այդ ուղղութեամբ աշխատել էին անշուշտ), բարձր լուսամուտի, նրա կարճ հասակի եւ հասուն տարիքի պատճառով (այդ օրերին նա 53 տարեկանից անց էր (ծնուել է 1886 Մարտին, Շուշիում):

Որ Տէրգաբրիէլեանը ինքնուրոյն չէր կարող դուրս նետուել լուսամուտից՝ հաւաստում է անգամ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի նախկին ժողովրդական կոմիսարի տեղակալի քարտուղար Մարիա Աւակովան 1937 Սեպտեմբերի 20ի իր զեկոյցում՝ ուղղուած Երեւան ժամանած յանձնաժողովի անդամ՝ ԽՍՀՄ ՆԳԺԿ անվտանգութեան վարչութեան Դ.

---

[12] *Խորհրդային Հայաստան*, 4 Յունուար 1936:

[13] Տէրգաբրիէլեանը ՀամԿ(բ)Կ կենտկոմի 1935 Փետրուարի 5ի որոշմամբ ազատուել էր Հայաստանի ժողկոմխորհի նախագահի պարտականութիւններից; Ուշադրութիւն դարձնել՝ Տէրգաբրիէլեանը ազատուել էր ՀամԿ(բ)Կ կենտկոմի որոշ-մամբ: Դրանից յետոյ նոր այդ որոշումը հաստատուել էր, չէր կարող չհաստատ-ուել, ՀԿ(բ)Կ կենտկոմի բիւրոյի կողմից 1935ի Յունուարի 18ին, իսկ նոյն թուա-կանի Յունիսին կայացած կենտկոմի *պլենում*ում Տէրգաբրիէլեանը հանուել էր նաեւ ՀԿ(բ)Կ կենտկոմի բիւրոյի կազմից: Ձերբալալուել էր Մոսկուայում, 1936ի կէսերին, ուղարկուել Երեւան (ՀԱԱ, նախկին կուսարխիւ, ֆ. 1, ց. 15, գ. 2, թ. 158, եւ գ. 17, թ. 100:

բաժնի պետ՝ պետանվտանգութեան աւագ մայոր Լիտվինին, երբ վերաքննում էին Տէրգաբրիէլեանի գործը:

> Երբ ինձ յայտնի դարձաւ, որ ՀԽՍՀ ՆԳԺԿ ժողկոմի, ժողկոմի տեղակալի եւ ուրիշների կողմից թոյլ է տրուել այնպիսի ստոր արարք՝ ձերբակալուած Տէրգաբրիէլեանի նկատմամբ, համարում եմ անհրաժեշտ Ձեզ տեղեկացնել հետեւեալի մասին. ձերբակալուած Տէրգաբրիէլեանին սկզբում հարցաքննում էր ՆԳԺԿ անվտանգութեան IV բաժնի I բաժանմունքի պետը, այնուհետեւ նրան մի շարք անգամներ բերում էին հարցաքննութեան անվտանգութեան IV բաժնի պետի տեղակալ Նիկողոսեանը եւ ժողկոմի տեղակալ Գէորկովը, ըստ որում հարցաքննութեան ժամանակ Գէորկովը կալանաւորին մայր էր հայհոյում եւ անգամ իմ սենեակում լսում էր, ինչպէս էր կալանաւորը լալիս: Արձանագրութիւն նրանք չէին կազմում, միքանի անգամ ինձնից թղթեր էին վերցնում, բայց չէին կազմում...
>
> Վերջին անգամ ես տեսել եմ կալանաւոր Տէրգաբրիէլեանին 19/VIIIին, երբ նրան բերեցին հարցաքննութեան: Նրան բերեց հերթապահ պարետ ընկ. Դարբինեանը: Տէրգաբրիէլեանը հազիւ էր քայլում, նա դիմեց հերթապահ պարետին եւ խնդրում էր ասել բժշկին, որ նա դեղ դուրս գրի, քանի որ սիրտը վատ է:
>
> Երբ իմացայ, որ կալանաւոր Տէրգաբրիէլեանը դուրս է նետուել լուսամուտից՝ շատ ցնցուած էի եւ անգամ արտայայտեցի իմ զարմանքը ժողկոմի տեղակալին ասելով. «Ինչպէ՞ս էր նա կարող դուրս նետուել, այդքան բարձր լուսամուտից, նա փոքր մարդ էր եւ դրանից բացի հազիւ էր քայլում...[14]:

Սահակ Տէրգաբրիէլեանի ողբերգական մահուան հանգոյցի շառաւիղները բացայայտւում են, երբ խորանում ենք դրան վերաբերող փաստաթղթերին: Բարեբախտաբար այդպիսիք կան:

Մանրակրկիտ քննել ենք Հայաստանի անվտանգութեան մարմինների արխիւի ֆոնդ թիւ 5407ի Տէրգաբրիէլեանին վերաբերող երկու հատորից բաղկացած գործը (գործ թիւ 19114, հ. 1-231 թերթ, հ. 2-391 թերթ): Այս հատորներում ամփոփուած նիւթերը Տէրգաբրիէլեանի անմիջական քննութեան փաստաթղթերը չեն: Հայաստանում դրանք ընդհանրապէս բացակայում են: Նշուած գործերում Տէրգաբրիէլեանի ողբերգական մահից յետոյ՝ 1937ի Սեպտեմբերին նրան ներկայացուած մեղադրանքի եւ մահուան՝ ԽՍՀՄ ՆԳԺԿ պետանվտանգութեան գլխաւոր վարչութեան լրացուցիչ ստուգման՝ հարցաքննութիւնների արձանագրութիւնների պատճէններն են: Դրանք հայկական կողմը ձեռք էր բերել Ստալինի մահից յետոյ՝ 1954ին, Տէրգաբրիէլեանին ներկայացուած մեղադրանքների վերանայման կապակցութեամբ (հարցաքննութիւնների բնօրինակները գտնւում են ԽՍՀՄ նախարարների խորհրդին առընթեր պետանվտանգութեան կոմիտէի հաշուառման-արխիւային բաժնում): Ընդգծենք՝ 1937ի Սեպտեմբերին իրականացուած ստուգման նիւթերը: Ըստ որում ճիշտ այն ժամա-

[14] ՊԱԿի արխիւ, գործ թիւ 19114, արխիւ թիւ 5407, հ. 2, թ. 11-12:

նակ, երբ տեղի էր ունենում սեպտեմբերեան *պլենումը*: Այս երկու - առաջին հայեացքից տարանջատ - գործընթացները, տեղի էին ունենում միաժամանակ եւ զուգահեռ: Ուշադրութեան արժանի է եւս մի փաստ: Լրացուցիչ ստուգումը կատարուել է ոչ թէ Հայաստանի անվտանգութեան մարմինների, կամ իշխանութիւնների հայցով, այլ հենց՝ ԽՍՀՄ ՆԳԺԿի նախաձեռնութեամբ: Եւ դա չէր կարող կապուած չլինել Ստալինի նամակի եւ ՀԿ(բ)Կ կենտկոմի սեպտեմբերեան *պլենումի* հետ: Հարկաւոր էին շտապ փաստական տուեալներ՝ Հայաստանի ղեկավարութեան հակախորհրդային գործունէութեան, մասնաւորապէս Հայաստանի ՆԳԺի կոմիսար Մուղդուսու, որին ձերբակալելու անհրաժեշտութեան մասին յիշատակում էր Ստալինը իր նամակում:

Յիշենք, Խանջեանի ողբերգական մահուան դէպքում, չնայած Անդրերկոմի Ստալինին ուղղուած նամակում Կենտրոնի կողմից յանձնաժողով ուղարկելու եւ Խանջեանի «ինքնասպանութեան» հարցը տեղում քննելու համար հայցին, Ստալինը բաւարարուել էր Անդրերկոմի բացատրութեամբ, ինչպէս նշում էր Կուդրիաւցեւը իր հաղորդումում՝ «Նոյն օրը ստացուեց ընկ. Ստալինի հետեւեալ պատասխանը. «ՀամԿ(բ)Կ կենտկոմը չի մտածում ուղարկելու իր ներկայացուցչին...»[15]

Ոչ մի յանձնաժողով: Միանգամայն պարզ է. ինչու՞ այն դէպքում այնպէս, իսկ այս դէպքում՝ այսպէս:

Լրացուցիչ ստուգման ընթացքում ԽՍՀՄ ՆԳԺԿ պետանվտանգութեան գլխաւոր վարչութեան 4րդ բաժնի պետի, 4րդ բաժնի բաժանմունքների պետերի կողմից հարցաքննուել են գլխաւորապէս Տէրգաբրիէլեանի մահուան գործով մեղադրուող ՀԽՍՀ ՆԳԺԿի հիմնական պաշտօնատար անձինք՝ ժողկոմ Խաչիկ Մուղդուսին (լինելով *պլենումի* մասնակից, ամէնայն հաւանականութեամբ, նա ձերբակալուել է *պլենումի* բացման օրը, հենց նիստերի դահլիճում, Ստալինի նամակում նրա ձերբակալման անհրաժեշտութեան մասին պահանջի հիմամբ), նրա անմիջական ենթականերից՝ տեղակալ Իւան Գէորկովը եւ 4րդ բաժնի պետի տեղակալ Եղբայր Նիկողոսեանը (վերջին երկուսը ձերբակալուել են 1937ի Սեպտեմբերի 14ին, *պլենումի* բացման նախօրեակին):

Մինչեւ 1937ի սեպտեմբերեան լրացուցիչ ստուգման մանրամասներին անդրադառնալը, տեսնենք ինչ է կատարուել *պլենումի* նիստերում:

ՊԼԵՆՈՒՄԻ ՅԵՏԱԳԱՅ ԸՆԹԱՑՔԸ

Պլենումի որոշումը կազմելու համար Սեպտեմբերի 17ի երեկոյեան նիստում Մալենկովի առաջարկութեամբ միաձայն ընտրում է յանձնաժողով: Ուշագրաւ է, որ յանձնաժողովի ստեղծողն ու նրա կազմի վերաբերեալ առաջարկութիւն անողը, ինչպէս եւ յանձնաժողովի «ընտրուած» նախա-

[15] ՀԱԱ, նախկին կուսարխիւ, ֆ. 1, ց. 15, գ. 2, թ. 158, եւ գ. 17, թ. 100:

գահը նոյնինքն Մալենկովն էր: Ըստ էութեան *պլենում*ի աշխատանքների գործնական ղեկավարը Մալենկովն էր, փաստական ղեկավարը՝ Ն.Ս. Խրուշչովի խօսքերով ասած «անմիջապէս Երեւան ցատկոտած» եւ համեստօրէն իրեն ստուերում պահող Բերիան:

Սեպտեմբերի 18ի առաւօտեան նիստում, հինգ հոգու ելոյթից յետոյ նորընտիր յանձնաժողովի նախագահ Մալենկովի մի նոր առաջարկութեամբ, *պլենում*ը իր աշխատանքները դադարեցնում է միքանի օրով «մի շարք յատուկ հարցերի ուսումնասիրութեան համար»: *Պլենում*ի այս խորհրդաւոր ընդմիջումն անկասկած բացատրւում էր Հայաստանում «լայն ճիւղաւորում ունեցող հակախորհրդային կազմակերպութեան «յայտնաբերման» եւ այդ կապակցութեամբ «ժողովրդի թշնամիների նոր խմբերի մերկացման», ձերբակալման եւ նախնական հարցաքննութիւնների կազմակերպման հանգամանքով:

ԽՄԿԿ ԻԲ. համագումարում (1961 Հոկտեմբեր) ունեցած իր ելոյթում ԽՄԿԿ կենտկոմին առընթեր կուսակցական վերահսկողութեան կոմիտէի նախագահ Ն.Մ. Շվերնիկը վկայում էր. «*...գրգռիչ մեթոդներով Մալենկովը իրականացրեց Հայաստանում կուսակցութեան նուիրուած կադրերի ջախջախումը: Երեւան գալու ճանապարհին Մալենկովը մտաւ Թբիլիսի Բերիայի մօտ եւ պայմանաւորուեց նրա հետ այսպէս կոչուած «հետաքննութեան» կարգի մասին, որը պէտք է հաստատէր նաեւ Հայաստանում առկայ լայն ճիւղաւորուած հակախորհրդային կազմակերպութեան վարկածը: Այդ գրգռութեան հետեւանքով անձամբ Մալենկովի կարգադրութեամբ տեղի ունեցան անօրինական ձերբակալութիւններ Հայաստանի կենտկոմի եւ ժողկոմխորհի գրեթէ ողջ ղեկավարութեան: Մալենկովը անձամբ էր հարցաքննում ձերբակալուածներին, ըստ որում գործադրելով անթոյլատրելի մեթոդներ*»[16]:

Համագումարում ունեցած իր ելոյթում Մալենկովի հարցին անդրադառնում է նաեւ ԽՍՀՄ մինիստրների սովետին առընթեր պետանվտանգութեան կոմիտէի նախագահ Ա.Ն. Շելեպինը. «*Մալենկովի խղճին է կոչում նաեւ Հայաստանի կուսակցական եւ խորհրդային ապարատի բազմաթիւ աշխատողների յիշատակը, որոնք ձերբակալուեցին նրա կարգադրութեամբ՝ Հայաստանի Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Խանջեանի սպանութեան կապակցութեամբ, որին, ինչպէս յետագայում պարզուեց, անձամբ սպանել էր Բերիան իր առանձնասենեակում: Այդպիսով, Մալենկովը ոչ մի մեղաւորութիւն չունեցող մարդկանց ոչնչացնելով օգնեց իր համախոհ Բերիային թաքցնել նրա այդ յանցագործութիւնը*»[17]:

---

[16] *ԽՄԿԿ ԻԲ. Համագումար, Սղագրական հաշուետուութիւն, հտր. II*, Մոսկուա, 1962, էջ 214 (ռուսերէն):

[17] Նոյն, էջ 404:

Շվերնիկի ասածը թէ Մալենկովը մտել է Թբիլիսի, հանդիպել բերիայի հետ պայմանաւորուել՝ հակասում է Հայկոմկուսի Կենտկոմի 1953 նոյեմբերեան *պլենում*ում ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար՝ Պիոտր Պոսպելովի ելոյթի նոյնախնդրի մեկնութեանը, որը վկայակոչելով Խրուշչովին, նշում է. «*Ընկ. Խրուշչովը Հայաստանի Կենտկոմի անդամների մասնակցութեամբ Կենտկոմի քարտուղարութեան նիստում ասում էր, ինչպէս է եղել ընկ. Արուտիւնովին առաջ քաշելու գործը: Ընկեր Խրուշչովը պատմեց, որ ընկ. Ստալինը Հայաստանի կոմկուսի Կենտկոմի 1937ի* պլենումի *հրաւիրուելու նախօրեակին, հրահանգեց ընկ.Միկոյեանին եւ ընկ. Մալենկովին, որ նրանք չմտնեն Թբիլիսի, ինչ-որ պատճառներ այստեղ կային, որ նրանք ուղղակի մեկնեն Հայաստան: Իսկ երբ Բերիան իմացաւ, որ ընկերներ Միկոյեանը եւ Մալենկովը արդէն Հայաստանում են, նա անմիջապէս ցատկոտեց Հայաստան եւ սկսեց առաջ քաշել Արուտիւնովի թեկնածութիւնը: Ահա այսպէս է եղել: ...Դա խօսում է այն մասին, որ Բերիան որոշեց աշխուժօրէն խառնուել այդ գործում եւ գործի դրեց բոլոր միջոցները...*»[18]:

Խիստ տարակուսանք է յարուցում այս երկուութիւնը: Պարզից պարզ է, որ եթէ ըստ Խրուշչովի, Ստալինը հրահանգել էր Միկոյեանին եւ Մալենկովին չմտնել Թբիլիսի՝ նրանք ոչ մի պարագայում չէին մտնի: Իսկ Շվերնիկը, այդ ամենատեղեակ անձերից մէկը երկրում, վկայում է տարբեր բան: Որի՞ն հաւատալ: Մեր համոզմամբ՝ Շվերնիկին: Ամէնից առաջ այն պատճառով, որ առանց Ստալինի հրահանգի ո՛չ Մալենկովը կը յայտնուէր Թբիլիսիում, ո՛չ Բերիան երեւանում՝ Հայկոմկուսի կենտկոմի սեպտեմբերեան *պլենում*ում, այն էլ Թբիլիսիից իր հետ բերած Հայկոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարի թեկնածու Արուտիւնովով (Գրիգոր Յարութիւնեան), որն առանց այլեւայլութեան ընտրուեց այդ պաշտօնում: Իսկ առանց Ստալինի գիտութեան ոչ այդ թեկնածուն կը յայտնուէր Երեւանում, ո՛չ էլ կ'ընտրուէր: Ամէն ինչ կատարուել էր Ստալինի կամքով: Որ Բերիան *պլենում*ում պատահական չէր երեւացել եւ խաղում էր առաջնային դեր՝ երեւում է նաեւ *պլենում*ում ներկայացուած մասնակիցների Հայկոմկուսի կենտկոմի անդամների ցուցակում նշուած նրա առաջին տեղով:

Հայաստանի ՆԳԺԿ պետանվտանգութեան կոմիտէում տէր ու տնօրինութիւն էին կատարում Մոսկուայից գործուղուած ԽՍՀՄ ՆԳԺԿ պետանվտանգութեան աշխատակիցները:

Ամէնայն հաւանականութեամբ առաջինը հարցաքննուել էր՝ *պլենում*ի մասնակից Մուղդուսին՝ ՀԿ(բ)Կ կենտկոմի *պլենում*ի նիստերի խորհրդաւոր ընդմիջմանը, ապա նրա տեղակալ Գէորկովը՝ Սեպտեմբերի 21ին՝ *պլենում*ի 2րդ արարի սկսման նախօրեակին (քիչ աւելի ուշ՝ Նիկողոսեանը): Ոչնչի մասին չի յուշում սա: Մալենկովին հարկաւոր էր շտապ փաս-

[18] ՀԱԱ, նախկին կուսարխիւ, ֆ. 1, ց. 33, գ. 12, թթ. 78-79:

տացի ամրապնդել Ստալինի նամակում Տէրգաբրիէլեանի սպանութեան ստալինեան վարկածը:

Ինչի՞ մասին են պատմում բոլոր երեք հարցաքննութիւնների արձանագրութիւնները: Դրանք ստալինեան ոգուն յարիր դիւային բեմադրութեան արարներն են: Երեք հարցաքննուողներն էլ առանց այլեւայլի խոստովանում են, որ իրենք հանդիսանում էին հակախորհրդային ազգայնական կազմակերպութեան մասնակիցներ: Ըստ որում, Մուղդուսին, որ անձամբ ինքը հանդիսացել է այդպիսի կազմակերութեան մասնակից, նախապէս յայտնել է ԽՍՀՄ ներքին գործերի կոմիսար Եժովին ուղղուած իր դիմումում: Իսկ հարցաքննութեան ընթացքում մանրամասն պատմում է, թէ ինչ է եղել իր դերը Խանջեանի կողմից գալխաւորուող այդ կազմակերպութիւնում: «*Խանջեանը ինձ ասում էր*,- վկայում է Մուղդուսին,- *որ իմ հիմնական խնդիրը որպէս եւ առաջին հերթին նրա ղեկավարներին բացայայտումից*», ինչպէս նաեւ «*սքօղել չեկիստական ապարատի կողմից բացայայտուած գործերը եւ միաժամանակ խուսափել կազմակերպութեան անդամների ձերբակալութիւններից*»: Ինչ վերաբերում է Տէրգաբրիէլեանին, Մուղդուսին ասում է. «*չնայած նրա հակախորհրդային գործունէութեան վերաբերեալ առկայ նիւթերին, նրա ձերբակալման հարցը ես չէի դնում... Արդիւնքում առանց իմ հայցի... Տէրգաբրիէլեանը ձերբակալուեց Մոսկուայում եւ ուղարկուեց քննութեան համար Երեւան*»: Ահա եւ հանգոյցի վերծանման միւս օղակը: Երեւանը չի եղել Տէրգաբրիէլեանին ձերբակալելու նախաձեռնողը, այլ Մոսկուան: Տէրգաբրիէլեանը ուղարկւում է Երեւան 1937ի Յուլիսի 2րդ կէսին վերջնական նպատակով՝ հաշուեյարդարի: Հրահանգը վերեւից տրւում է Մուղդուսուն: Այդ մասին փաստական-փաստաթղթային հիմք, պարզ է, չկայ եւ չէր էլ կարող լինել, բայց յետագայ ընթացքը միայն դրա մասին է վկայում: Հրահանգ եղել է, բայց բանաւոր: Մուղդուսին հրահանգը փոխանցում է իր ենթականերին՝ նոյնպէս բանաւոր, սակայն նրա տուած հրահանգի մասին... խոստովանում են բոլոր երեք հարցաքննուողները, նաեւ՝ Մուղդուսին: Պարզ է, Մուղդուսին չի յայտնում վերեւից իրեն տրուած հրահանգի մասին ենթականերին, այդ մասին չի յայտնում նաեւ իրեն հարցաքննողներին: Նա ասում է այն ինչ իրենից ուզում էին լսել հարցաքննողները: Իսկ Մուղդուսուն հարցաքննողը եղել է Լիտվինը: Այսինքն Մուղդուսին հարցաքննուել է եւ ձերբակալուել անմիջապէս *պլենումի* ընթացքում՝ Մալենկովի կողմից յայտարարուած խորհրդաւոր ընդմիջման ժամանակ: «*Առաջին 15-18 օրերի ընթացքում*,- *ասում է Մուղդուսին*,- *Տէրգաբրիէլեանին ոչ մէկը չէր հարցաքննում: Միքանի օր անց Հայաստան գալուց յետոյ Տէրգաբրիէլեանը հարցաքննութեան ժամանակ քննիչին յայտարարեց, որ ինքը կազմակերպութեան անդամ է, խնդրել է իրեն կենտրոնանալու եւ մտածելու հնարաւորութիւն տալ... որ յաջորդ հարցաննութեան ժամանակ... մանրամասն պատմի իրեն յայտնի՝ Հայաստանի ՆԳԺԿ ներսում աջտրոցկիստական, ազգայնա-*

կան կազմակերպութեան հակախորհրդային գործունէութեան վերաբերեալ»: Այդ մասին ինձ զեկուցեցին, ես վճռեցի Տէրգաբրիէլեանից ամէն գնով ազատուել: Կանչելով ինձ մօտ կազմակերպութեան մասնակից իմ տեղակալ Գէորկովին, սկսեցինք նրա հետ քննարկել Տէրգաբրիէլեանից ազատուելու հարցը: Արդիւնքում վճռեցինք, եթէ Տէրգաբրիէլեանը նորից գայ հարցաքննութեան նպատակ ունենալով պատմելու ինչ որ իրեն յայտնի է կազմակերպութեան մասին, պէտք է նրան ոչնչացնել: Գէորկովը իր վրայ վերցրեց այդ գործում ներգրաւել ՆԳԺԿ ներսում հակախորհրդային կազմակերպութեան մասնակից Նիկողոսեանին, ֆիզիկապէս ամուր մի մարդու, որի հետ ինքը կարող է պայմանաւորուել Տէրգաբրիէլեանին դուրս նետելու լուսամուտից փողոց, ներկայացնելով որպէս նրա կողմից գործած ինքնասպանութիւն: ...Յաջորդ օրը՝ իմ Գէորկովի հետ խօսակցութիւնից յետոյ, Տէրգաբրիէլեանը բերուել էր հարցաքննութեան ՆԳԺԿ շէնքի 3րդ յարկում գտնուող Գէորկովի առանձնասենեակ: Լուսամուտները Գէորկովի առանձնասենեակի այդ ժամանակ բաց են եղել:

Օգտուելով յարմար պահից Նիկողոսեանը Տէրգաբրիէլեանի հարցաքննութեան ժամանակ դուրս է նետել նրան 3րդ յարկից փողոց, որից Տէրգաբրիէլեանը անմիջապէս մահացել էր»[19]:

Տէրգաբրիէլեանին պատուհանից դուրս նետելու մանրամասների մասին, միւս երկու մեղադրեալները՝ Գէորկովը եւ Նիկողոսեանը հաստատում են Մուղդուսու ցուցմունքները: Ամէն ինչ խօսում է այն մասին, որ բեմադրուող ներկայացումը ամէնայն մանրամասնութեամբ համաձայնեցուած է եղել:

Նիկողոսեանը խոստովանում է. «*...երեկոյեան ժամը 11ին, երբ ես մտայ Գէորկովի առանձնասենեակ, վերջինս ինձ հաղորդեց, որ Մուղդուսին մեզ ցուցում է տուել սպանել Տէրգաբրիէլեանին: Համաձայնուելով... ես կանչեցի Տէրգաբրիէլեանին հարցաքննութեան՝ Գէորկովի առանձնասենեակ: Երբ հերթապահը Տէրգաբրիէլեանին ներս բերեց սենեակ... Գէորկովը վեր կացաւ եւ մօտեցաւ Տէրգաբրիէլեանին: Ես էլ հետեւեցի նրան: Մենք երկուսով սկսեցինք առաջանալ Տէրգաբրիէլեանին եւ սեղմել նրան բաց լուսամուտին, միաժամանակ բղաւելով. «պէ՛տք է խօսես, պէ՛տք է խոստովանես»: Սեղմելով Տէրգաբրիէլեանին բաց լուսամուտին... ես արագ բարձրացրեցի նրան, միաժամանակ փակելով բերանը, որ չբղաւի, եւ նետեցի գլխիվայր լուսամուտից... Որպէսզի թաքցնենք այդ գործը, ես եւ Գէորկովը անմիջապէս աղմուկ բարձրացեցինք եւ տարածեցինք, որ Տէրգաբրիէլեանը հարցաքննութեան ժամանակ ինքնասպանութիւն գործեց դուրս նետուելով լուսամուտից»*[20]:

---

[19] ՊԱԿի արխիւ, գործ թիւ 19114, արխիւ թիւ 5407, հ. 1, թթ. 214-215:

[20] Նոյն:

Հարց է առաջանում. հրահանգուել էր սպանել, բայց ինչու՞ լուսամուտից դուրս նետելու միջոցով: Սպանելու բազում ձեւերի էին տիրապետում ներքին գործերի մարդասպանները: Պատասխանը մէկն է, քանի որ լուսամուտից դուրս նետելու դէպքում էր հնարաւոր հեշտ յօրինել Տէրգաբրիէլեանի ինքնասպանութեան վարկածը, կամ, աւելի ստոյգ՝ այդ-պէս էր հրահանգուած վերեւից: Վերյիշենք Ստալինի նամակի տողերը...

ՍԵՊՏԵՄԲԵՐԵԱՆ *ՊԼԵՆՈՒՄԻ* ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐԸ

Պլենումի նիստերի դահլիճում աշխատանքները վերսկսում են Սեպտեմ-բերի 22ին: Օրուայ երեկոյեան նիստի վերջում բուռն ծափահարութիւններ-ով դիմաւորուած հանդէս է գալիս ՀամԿ(բ)Կ կենտկոմի քաղբիւրոյի ան-դամ Միկոյեանը:

Պլենումի վերջին օրը՝ Սեպտեմբերի 23ի երեկոյեան փակ նիստում միաձայն ընդունում է հետեւեալ որոշումը.

> ա/ որպէս մերկացուած հակայեղափոխականներ, ժողովրդի թշնամիներ Ա. Ամատունուն՝ Հայաստանի Կ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղարի պաշտօնից, իսկ Ստ. Ակոպովին՝ Հայաստանի Կ(բ)Կ կենտկոմի երկրորդ քարտուղարի պաշտօնից հանել, հեռացնել նրանց Հայաստանի Կ(բ)Կ կենտկոմի կազմից եւ կուսակցութեան շարքերից, նրանց գործը յանձնելով ՆԳԺԿ մարմիններին[21]:

Եւս միքանի կէտով նոյնկերպ որպէս մերկացուած հակայեղափոխականներ, ժողովրդի թշնամիներ Կ(բ)Կ կենտկոմի կազմից եւ կուսակցութեան շարքերից հեռացւում են Գուլոյեանը, Գէորկովը, Կոստիկեանը, Դաստակեանը, Կուրսէլը, Եաղուբեանը:

Պատահական չէր, որ բռնադատումների այս նոր ալիքի առաջին զոհերը դարձան հենց Ամատունին, Ակոպովը, Մուղդուսին՝ Բերիայի մանկլաւիկները, որոնց ձեռքերով էին կատարւում կենտրոնից հրահանգուող բոլոր անօրինութիւնները, որոնց թւում, ինչպէս գրում է Խանջեանի կի-նը՝ Ռոզա Վինզբերգը իր յուշերում՝ Բերիան «*Պարբերաբար Հայաստան աշխատանքի ուղարկուող իր մարդկանց միջոցով, որոնք կուրօրէն ենթարկւում էին Բերիային եւ ուղղորդւում նրա կողմից... գրաւում էին Խանջեանին հակադիր դիրքեր, ամէն կերպ աշխատում հեղինակազրկել նրան, մեկուսացնել... տարածում էին Խանջեանի մասին ամէն տեսակի հնարովի ասեկոսէներ եւ խեղաթիւրուած փաստեր*»[22]:

Նրանց վերացնելով աշխատում էին նախ մէկընդմիշտ թաղել նրանց միջոցով իրագործուած բոլոր յանցաւոր գործերը, ապա՝ հանրապետութիւնում մինչ այդ կատարուած յանցաւոր արարքները, տնտեսական, ընկերային, մշակութային բնագաւառներում եղած թերութիւններն բացառապէս վերագրել նրանց եւ նրանց համախոհների թշնամական գործունէու-

---

[21] ՀԱԱ, նախկին կուսարխիւ, ֆ. 1, ց. 17, գ. 25, թ. 10:

[22] ՀԱԱ, Նախկին կուսարխիւ, ֆ. 4033, ց. 5, գ. 319, թ. 110:

թեանը: Այն նաեւ ե՛ւս մի «փառաւոր» առիթ էր փառաբանելու «Մեծ Առաջնորդի իմաստութիւնն ու խորաթափանցութիւնը», որի ճիշտ ժամանակին «օգնութեան մեկնած ձեռքը փրկեց» Հայաստանն ու հայ ժողովրդին վերահաս կործանումից:

*Պլենում*ի երկու արարով բեմադրութեան վարագոյրն իջեցնելուց առաջ՝ մասնակիցների խանդավառ ծափողջոյնների եւ հիացական բացականչութիւնների տարափի տակ ընդունուեց ժողովուրդների մեծագոյն առաջնորդ, «հայ ժողովրդի ազատարար» ընկեր Ստալինին ուղղուած հեռագիր, որում կային նաեւ այսպիսի տողեր.

> Թանկագին ընկեր Ստալին: Հայաստանի բոլշեւիկները Հայաստանի Կ(բ)Կ կենտկոմի *պլենում*ում բացայայտեցին հիմնական աւազակային որջը եւ ջախ-ջախեցին այն: Առաջնորդի Ձեր մեծագոյն խորաթափանցութիւնը, նրբագոյն հոտառութիւնը օգնեցին մեզ դատաստան տեսնելու նրանց հետ: Սակայն թշնամիներ դեռեւս կան: Նրանք, մինչեւ վերջին սրիկան, կը ջնջուեն ԽՍՀ հո-ղի երեսից: Մենք վերջ կը տանք յանցաւոր անհոգութեանը թշնամիների նը-կատմամբ, թոյլ չենք տայ նրանց թրեւ գալ Հայաստանում, գաղտագողի խայ-թոցներ հասցնել, փորձել քայքայել մեր խորհրդային երկիրը, մինչեւ վերջին մարդը կը բնաջնջենք նրանց եւ կը մաքրենք մեր անման հողը լրտեսական-վնասարարական, դաշնակցական-տրոցկիստական վիժուածքներից:

Հեռագիրը հրապարակուել է *Խորհրդային Հայաստան*ի Սեպտեմբերի 26ի առաջին էջում՝ «Հայաստանի բոլշեւիկները պատրաստ են իրենց կեանքը, իրենց արիւնը կաթիլ առ կաթիլ տալու Լենինի-Ստալինի գործի յաղթանակի համար» խորագրի տակ: Նոյն համարում՝ «Հայ ժողովրդի արիւնը ծծող իժերը» խորագրով մեծ առաջնորդող է նաեւ տպագրուած:

Հրահանգը տրուած էր: Հանրապետութեան կուսակցութեան քաղկոմները եւ շրջկոմները մէկը միւսի ետեւից *պլենում*ներ են հրաւիրում եւ բանադրում, յայտնաբերում, անարգանքի սիւնին գամում ամէնուր «սողոսկած, թաքնուած ժողովրդի թշնամիներին»: Իսկ *Խորհրդային Հայաստան*ը՝ «Քննարկում ենք ՀԿ(բ)Կ կենտկոմի *պլենում*ի մարտական որոշումները» խորագրով Սեպտեմբերի 27ի, 29ի, Հոկտեմբերի 2ի համարներում լուսաբանում է կայացած քաղկոմների, շրջկոմների *պլենում*ների մասին հաղորդումները «պատշաճ» վերնագրերով. «Բնաջինջ անենք հայ ժողովրդի թշնամիներին»: Լենինականի կուսքաղկոմի, Աշտարակի, Մարտունու, Ղամարլուի, միւս կուսշրջկոմների նոյնաբովանդակ հաղորդումներ են յայտնւում թերթի էջերում՝ «Վնասարարութիւն կարբիդի գործարանում», «Ժողովրդի թշնամիները Քանաքեռգեսում», «Վնասակար գործունէութիւնը մանկավարժական ինստիտուտում» եւն. եւն.:

Եթէ 1930ականների իրադարձութիւններին նայում ենք՝ բարոյականի, մարդասիրութեան, օրինականութեան, մարդու իրաւունքների աչքերով եւ նման չափանիշերով, չնայած մեր ժամանակներում էլ անբարոյականութեան, մարդատեացութեան, մարդու իրաւունքների ոտնահարման օրի-

նակներ կարելի է բերել որքան ասես. դրանք ոչ մի պատկերացումներում կարող են տեղաւորուել: Իսկ ԽՍՀՄ ողջ տարածքում, այդ թւում Խորհրդային Հայաստանում դա սովորական, ամէնօրեայ երեւոյթ էր, այնքան սովորական, որ իշխանութիւնների գլխաւոր պատգամախօսը հանդիսացող նոյն *Խորհրդային Հայաստան*ում Հայաստանի քաղաքացին կարդալով «Թշնամին դասախօսի դիմակով»՝ Պետհամալսարանի լատիներէն լեզուի եւ Հռոմի պատմութեան, իրաւունքի պատմութեան դասախօս Պ. Սոտնիկեանի մասին հաղորդումը, ոչ միայն չէր զարմանայ, այլեւ կարող էր նաեւ գետնից բարձրացրած քարը նետել այդ դասախօսի դէմքին, ամէնեւին չիմանալով եւ չճանաչելով նրան: Չիմանալով, որ այդ պահին Հայաստանի պետանվտանգութեան նկուղներում տառապում էր հայ ժողովրդի անուանի գործիչների մի ստուար խումբ, աւելի մեծ խմբեր արդէն ճգնում էին «Արշիպելագ Գուլագի» հեռաւորարեւելեան բազմաթիւ ճամբարներում, կամ դրանց ճանապարհին էին: Բռնադատուած եւ հրաշքով աքսորավայրից տարիներ անց կենդանի տուն վերադարձած Լենինականի կուսքաղկոմի քարտուղար Անդրանիկ Հասրաթեանը պատմում էր տողերիս հեղինակին, որ երբ իրեն «ներս հրեցին» պետանվտանգութեան շէնքի նկուղային յարկաբաժնի թիւ 10 բանտախուցը՝ «Ծխակոլոլ գաղջ կիսամութում շուրջ երեք տասնեակ մարդ էր նշմարւում... Նրանցից շատերը յայտնի դէմքեր էին»: Եւ թւում է դրանցից միքանիսին՝ ակադեմիկոս Կարօ Մելիք-Օհանջանեան, գրող Վալտէր Արամեան, ԵՊՀ ռեկտոր Վռամ Կոստանեան, ԽՍՀՄ դատախազի նախկին օգնական Ռուբէն Քաթանեան, հանրապետութեան լուսաւորութեան նախկին ժողկոմ Պօղոս Մակինցեան, ֆինանսների ժողկոմ Հայկ Եաղուբեան, Հայաստանի ճանապարհաշինարարութեան գլխաւոր վարչութեան պետ Արշակ Գոգունց, Էջմիածնի կուսքաղկոմի քարտուղար Պետիկ Պետրոսեան, Լենինականի *Բանուոր* թերթի նախկին խմբագիր Վաչէ Օհանեան, անուանի բոլշեւիկներ, յեղափոխական, կուսակցական, պետական գործիչներ, գիտութեան, մշակոյթի ճանաչուած մշակներ, նաեւ ծառայողներ, բանուորներ[23]:

1938 Յունիսին Հայաստանի Կոմկուսի կենտկոմի 55 անդամներից եւ անդամութեան թեկնածուներից ողջ մնացին միայն 15ը: Սա ստալինիզմի արատաւոր՝ մոլախոտային սերմնացանութեան առատ բերքի պտուղներն էին: Բայց եւ չէին դադարում Ստալինին հիւսուող գովքերն ու ներբողները:

ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ՍՏԱԼԻՆ

Ստալինեան ամենատիրութեան տարիներին, ինչպէս ամէնուր լայնատարած երկրում, այնպէս էլ Հայաստանում, դժուար էր գտնել գրիչ շարժելու ընդունակ մարդ՝ տաղանդաւոր թէ անտաղանդ, որ գովք ձօնած չլինէր

[23] Սերգէյ Ամիրեան, «Երբ վրայ հասաւ 1936ը...», *Երեկոյեան Երեւան*, 30 Օգոստոսի 1988:

Առաջնորդին: Սկսած Նայիրի Զարեանից մինչեւ Չարենց ու Շիրազ – պարտադրուած - այլապէս... չնայած դա էլ չփրկեց Չարենցին: Դպրոցականները անգիր պէտք է անէին Զարեանի, իրօք, տաղանդաւոր ներբողը՝
Աքիլէսին Հոմերն երգեց, Ռուստամ Զալուն՝ Ֆիրդուսին», ստալինեան նուիրումի շիրազեան տողերը՝ «Քեզ արեւը պէտք է լինի յաղթանակի շքանշան//Քանզի կուրծքդ մի երկինք է քո մեծ սրտով իմաստութեան...»

Իսկ ինչպիսի երգեր էին հայ գուսանները ձօնում Առաջնորդին՝
Դու նստում ես Մոսկուայումը//Ջան Ստալին, ջան Ստալին//Պողպատի նման Ստալին

Գուսաններն ի՞նչ: Այդ տարիներին Ստալինին ներբողներ ձօնող նորելուկ աշուղ-յաւակնորդների մի բանակ առաջ եկաւ սկսած Քեաւառեցի Առաքելից, որ «բարեւ տարէք» էր յղում Առաջնորդին, Բունեաթեանից, որը հաւատացած էր.
Ամէնայն զարգացման դու եղար պատճառ//Խեղճ խաւար ցեղերին տուիր գիր ու տառ,
Դաշնակ, կուլակ, տէրտէր վերացրիր իսպառ//Ապրում ենք հանգիստ ու խաղաղ, Ստալին:

Գրիչը դեռ նոր շարժել սովորած կոլտնտեսական Դարչոյի Ստալինին նուիրուած «բանաստեղծութեան» երեք տողերը ներառուեցին Առաջնորդին 1935 Նոյեմբերին ուղարկուած 5 էջանոց նամակում՝ «Նամակ ընկեր Ստալինին Խորհրդային Հայաստանի աշխատաւորութեան կողմից» խորագրով.
Յերեսդ տեսնելու փափագով վառա,
Յեթե իմ փափագիս անհասնել մեռա,
Ումրս քեզ եմ բաշխում, ընկեր Ստալին[24]:

Ահա այսպէս: Հայ ժողովրդի մեծ ու փոքր ընտրեալներին գլխատած Մեծ Ստալինին գովերգում ու փառաբանում էր նոյն հայ ժողովրդի մեծից փոքրը (անշուշտ, ինչպէս սովորաբար, առանձին բացառութիւններով): ... Եւ դեռ այստեղ չասուած ինչպիսի ցաւալի հետեւանքներ առաջ բերեց 1937ի սեպտեմբերեան չարաշուք *պլենումը* եւ Ստալինի նոյնքան չարագուշակ նամակը...

ՍՏԱԼԻՆԻԶՄԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

1953 Մարտի 5ին մահացաւ Ստալինը: Նա մահացաւ, բայց նրա գործը չէր կարող նրա հետ աւարտուել: Պրոլետարիատի մեծ առաջնորդ Վլադիմիր Ուլիանով Լենինը ժամանակին ասել էր. «... *նրանք, ովքեր իրականում վաստակել են քաղաքական գործչի անունը, չեն մեռնում քաղաքականութեան համար, երբ վրայ է հասնում նրանց ֆիզիկական մահը*»[25]:

---

[24] ՀԱԱ, նախկին կուսարխիւ, ֆ. 1, ց. 15, գ. 72, թթ. 1-4:

[25] Վ. Ի. Լենին, «Մուրոմցեւի մահուան առիթով տեղի ունեցած ցոյցի մասին (դիտողութիւն)», *Երկերի լիակատար ժողովածու*, *հտր. 20*, Երեւան, 1979, էջ 10:

Ստալինի ֆիզիկական մահով նրա 30ամեայ մենատիրութեան ընթացքում կառուցած վարչակառավարչական բուրգը, սրանից բխող բոլոր հետեւանքներով հանդերձ, շարունակեց ապրել: Ստալինից յետոյ նրա աթոռը զբաղեցրած Խրուշչեւի «Անհատի (Ստալինի) պաշտամունքը երկրում արմատախիլ անելու» համարձակ ջանքերը (Ստալինի յուշարձանների տեղահանում, այդ թւում՝ Երեւանի Յաղթանակի զբօսայգում կանգնեցուած վիթխարի բրոնզաձոյլ արձանի, նրա անուամբ հիմնարկ-ձեռնարկութիւնների, հաստատութիւնների վերանուանում եւն.) սպասուած արդիւնքը չտուեցին: Ստալինի պաշտամունքը խոր արմատներ էր նետել երկրում, ժողովրդի մի մասի սրտում: Նրան շարունակեցին երկրպագել նրան երկրպագողները, շատ վայրերում անգամ թոյլ չտալով նրա արձանների, կիսանդրիների տեղահանումը, բեռնատար մեքենաներից, տաքսիներից շատերի դիմահայեաց ապակիներին երեւացին Ստալինի լուսանկարները...

Մենք երբեք մինչեւ վերջ չենք հասկանայ, եւ, հետեւաբար, մինչեւ վերջ չենք կարող արմատախիլ անել ստալինիզմը մեր կեանքից (որի կենսունակութեան եւ որի զանազան դրսեւորումներին հանդիպում ենք նաեւ հայաստանեան ներկայ կեանքում)՝ եթէ ամբողջութեամբ չբացայայտենք հասարակութեան համար մահուան չափ վտանգաւոր այդ վարակի բաղադրութիւնը: Հասու չլինենք նրա սնուցող ակունքներին, ձեւափոխումներին ու դրսեւորումներին մեր պատմութեան բոլոր փուլերում՝ 1920ականների սկզբի սաղմնաւորումից, մինչեւ մեր ժամանակները: Ախտանիշը ճիշտ որոշելուց յետոյ է հնարաւոր բուժել հիւանդութիւնը:

Ստալինին եւ ստալինիզմին նուիրուած բազում ու բազմապիսի հրապարակումներին ու ուսումնասիրութիւններին, մենք դեռեւս չենք կարող վստահութեամբ ասել, որ արդէն տուել ենք ստալինիզմի յարուցած բոլոր հարցերի սպառիչ պատասխանը: Նաեւ այն հանելուկի պատասխանը, թէ ինչպէս էր որ խորհրդային մարդկանց բացարձակ մեծամասնութիւնը, ներառած մտաւորականութիւնը (բացառելով նրա ամենափոքր մասը կազմող այլախոհներին), այսպէս թէ այնպէս գործակցում էր ռեժիմի հետ՝ գիտակցաբար թէ անգիտակցաբար, թաքուն թէ բացայայտ, պարտադրանքով թէ սեփական կամքով: Կոմունիստական գաղափարախօսութիւնը ստալինեան մենատիրութեան տարիներին եւ դրանից յետոյ շարունակաբար թունաւորում էր մարդկանց հոգիները, կաղապարում նրանց մտքերը անգամ: Պարոյր Սեւակը առանց ստոյգ հասցէագրման, բայց անշուշտ նկատի ունենալով կոմունիստական գաղափարախօսութիւնը, հանճարեղօրէն բնութագրեց այն որպէս. «*Ոչ թէ գաղափար, այլ մի կաղապար, որ երազն անգամ իր մէջ է ձեւում*»:

Ստալինի մասին, ստալինիզմի բնութագրմամբ տարբեր լեզուներով աշխարհում անհաշիւ գործեր են գրուվել, վերլուծուել ու դեռ գրւում են, կը գրուեն:

ՅԵՏ ԳՐՈՒԹԵԱՆ

Ուզում եմ իմ այս գործը աւարտել Շեքսպիրի *Մակբէթ*ից շեքսպիրեան ժամանակների՝ ստալինեան ժամանակներին յար եւ նման մթնոլորտի մեծ թատրերգուի վրձնած տողերով, որոնք կարծես գրուել են ստալինեան թէ նման յատկանշերով ժամանակների մասին.

Ժամանակները սարսափելի են,
Երբ մեղադրում են դաւաճանութեան մէջ եւ ոչ մէկը
Չգիտի ինչու, երբ վախենում են
Սողացող լուրերից, չունենալով միջոց
Վտանգը պարզել, երբ անտեղեակութիւնը
Ծփում է չորս բոլոր, ինչպէս ովկիանոս
Եւ բոլորին վեր-վեր է նետում ինչպէս տաշեղ[26]:

Սա ժամանակների կապն է, սա նշանակում է, որ հին ու նոր ժամանակներում տարբեր երկրների հասարակական-քաղաքական յարաբերութիւններում մղձաւանջային երեւոյթների կարելի է հանդիպել, որոնցում ինչ-ինչ աղերսներ են հնարաւոր ստալինիզմի հետ: Դա այդպէս է: Բայց ստալինիզմը առանձնայատուկ է: Ստալինիզմը հենց նրանով է առանձնանում, որ սպունգի պէս իր մէջ ներծծեց անսահմանափակ իշխանութեան հասնելու, աստուածանալու պատմութեան դարաւոր այդօրինակ փորձը եւ այն իրականացրեց աշխարհի մէկ վեցերորդ մասը կազմող լայնարձակ երկրում: Պատահական չէր Ստալինի յատուկ վերաբերմունքը Ռուսաստանի ինքնակալ Իւան Դ. Ահեղի (1530-84) նկատմամբ, որը երկրում ահ ու սարսափ հաստատելու, հազարաւորների արեան գնով վաստակեց «Ահեղ» մականունը, հասնելով անսահմանափակ իշխանութեան:

STALINISM AND THE NOTORIOUS SESSION OF THE ARMENIAN COMMUNIST PARTY (SEPTEMBER 15-18 AND 22-23, 1937)

(Summary)

SERHAK AMIRYAN (vahamir@yahoo.com)

The paper examines and details the notorious September 1937 session of the Communist Party of Armenia, which occupies a unique place in the history of Soviet Armenia and the Armenian nation due to the violent decisions it took which initiated the Stalinist purges in Armenia and led to tragic consequences.

The author focuses on the factors that led to the session, the argumens made and the explanations given to implement the policy, which ultimately led to the killing and disappearnce of thousands of Soviet Armenian intellectuals and ordinary people.

---

[26] *Մակբէթ*, չորրորդ ակտ, երկրորդ տեսարան: